



«ՍԵՐԱՎԻ»
ՀԵՐՈՍԱԿԱՆ
ԴՐԵՅՖԵ



910·4
Խ-93



-5 OCT 2011

310.4

Խ-433


Պրոլետարիատ բոլոր յերկրների, միացե՛ք


Խ

Լ. ԽՎԱՏ ՅԵՎ. Մ. ԶԵՐՆԵՆԿՈ

„ՍԵՐՈՎԻ“ ՀԵՐՈՍԱԿԱՆ ԴՐԵՅՖԸԼ

Խորհրդային Միության Հերոս Պ. Շիրշովի
մերածական հոդվածով






ԱՏԱԼԻՆԻ ԱՆՈՒՆՈՎ



Խորհրդային Միուրյան Հերոս
Գ. Շիրջով



որհրդային ամբողջ ժողովուրդը չթուլացող
ուշադրությամբ հետևում եր սառցահատ շո-
գենավ «Գեորգի Սեղովի» դրեյֆին, մի նավի, վորի վրա համա-
րյա 27 ամիս պատվավոր ստալինյան հերթակալություն ելին տա-
նում՝ տառնչինդ անվեհեր ծովագնացներ:

Չնայած հսկայական դժվարություններին, սառուցների
ուղղմվելուն, մրրիկներին և դաժան սառնամանիքներին, սեղովա-
կանները պլանաչափ և կանոնավոր կերպով ընդարձակ դիտական
հետազոտություններ ելին կատարում: Թե՛ ամառը, թե՛ ձմեռը,
թե՛ թեռոյային գիշերները, թե՛ արկտիկ գալնան մասնակապատ-
որերին նրանք նույնչափ լարված և արդասավոր աշխատանք ելին
կատարում: Դրանով՝ արտահայտվում եր խորհրդային մարդկանց
յիրենի առանձնահատկությունը, այն ե՛ սկսած գործը միշտ
հասցնել մինչև վերջը: Սեղովականները մի անդամ ևս ցույց
տվեն, վոր հայրենիքի առաջադրանքը, Ստալինի ստաջադրանքը



Լ. ԽՎԱՏ Ի Մ. ՉԵՐՆԵՆԿՈ

ГЕРОИЧЕСКИЙ ДРЕЙФ «СЕДОВА»

Государственное издательство политической литературы
ЕРЕВАН • 1940

Կատարող խորհրդային մարդկանց վոչ մի գժվաբություն չի սարսափեցնում:

Ամեն մի վտանդի դեմ մղած պայքարում ցուցաբերվող արիտմությունը, անձնվերությունը, համարձակությունը—այս բոլոր բարոյական բարձր հատկությունները, վոր կուսակցությունը դաստիարակում և խորհրդային ժողովրդի մեջ, հիանալի կերպով արտահայտվեցին «Սեղովի» կոլեկտիվի առորյա գործերի մեջ: Վոչ մի արգելք չկարողացավ կոտրել նրանց բոլշևիկյան վոդին: Բնեուային ծովաղնացների ամուր, ստալինյան բարեկամությամբ զուված կոլեկտիվը շարունակ ապրում եր մեկ կյանքով մեծ հայրենիքի հետ: Սեղովականները գիտեյին, վոր հայրենիքը, կուսակցությունը, մեծ Ստալինը նրանց դժբախտության մեջ չեն թողնի և, յերբ այդ անհրաժեշտ կլլնի, հզոր ձեռք կմեկնեն իրենց զավակներին ողնելու համար:

«Սեղովի» հերոսական եպովեան գիտական մի բարձր սըխրագործություն և, վորն արժանի տեղ կդրավի մեր յերկրի պատմության մեջ:

Սեղովականների գիտական հետազոտությունները կենտրոնական բնեուային այլազանում գիտությանը տալիս են ամենաարժեքավոր տեղեկություններ, վորոնք լուսաբանում են մեր մոլորակի ամենահետաքրքրական բնադավառներից մեկը: Այդ հետազոտություններն ունեն վոչ միայն հսկայական թեորիական հետաքրքրություն: Նրանք կոդնեն Հյուսիսային ծովաղնացներին նաև իրեն անցկացնելու Հյուսիսային ծովային ճանապարհով, կոդնեն պայքար մղելու արկտիկ սառուցների դեմ՝ բնեուային ծովաղնացների այս մշտական թշնամու դեմ:

«Սեղովի» սառցահատ շողենավի դրեյֆին հետեւում եր ընկեր Ստալինը: Իսուիֆ Վիսսարիոնովիչը միշտ հետաքրքրվում էր, թե ինչպես ե ընթանում կյանքը դրեյֆող նավի վրա, հարցուվորձ եր անում սեղովականների գիտական աշխատանքների մասին, սիրտ եր տալիս նրանց, վոդեխնչում եր անձնվեր աշխատանքի:

1938 թ. գարնանը կապտելների ծովի սառուցներում միաժամանակ գրեյֆող յերեք սառցահատ նավերում գտնվում եր 217 մարդ: Ընկեր Ստալինի ստաջարկությամբ Մոսկվայից դրեյֆող քարավանի մոտ են ուղարկվում չորսմոտորանի յերեք ողանավ: Այդ ողանավերի հրամանատարներն եյին ընկ. ընկ. Սեղովինը, Գոլովինը և Որլովը: Ինքնաթիոնները գրեյֆող նավերից դուրս բերին 184 մարդ և մնացած 33 ծովաղնացներին հայթայթեցին անհրաժեշտ ամեն ինչ:

1938 թ. ամառը նույնական ընկեր Ստալինի անմիջական ցուցման համաձայն վորձ և կատարվում դրեյֆող նավերը սառուցի գերություններ զուրու հանելու: Կեկի վնասվելու պատճառով այն ժամանակ «Սեղովի» չկարողացավ բուքսիրի վերցրած հետեւ «Յերմակին» և մնաց դրեյֆելու Հյուսիսային սառուցյալ ովկիանոսում: «Սեղովի» վերածվեց շարժական դիտահետազոտական կայանի:

Մի վոքր ուշ, դարձյալ իսուիֆ Վիսսարիոնովիչի ցուցումով, «Սեղովի» մոտ ուղարկվեց արկտիկ նախատորմի Փլազմանական սառցահատ «Ի. Ստալինը»: Իսուիֆ Վիսսարիոնովիչը նախազգուշացրեց, վոր սառցահատի եկիպաժն անխոհեմաբար ոխոկ չանի և ձմեռելու վտանդի գեպքում անհապաղ հետ դառնա: Ստալինյան այս խմատուն նախազգուշացրումը Հյուսիսային ծովային ծանալարհների գլխավոր վարչությանն ողնեց ճիշտ կազմակերպելու ծովային դժվար ովկերացիան: Ֆլազմանական նավի եկիպաժն արեց այն ամենը, ինչ վոր կարող եր. սառցահատը «Սեղովից» արդեն 50 մղոն հեռավորության վրա յեր գտնվում, բայց հանդիպեց համատարած սառուցների և վերադարձավ նավահանգիստ:

Սեղովականները տոկուն կերպով շարունակեցին աշխատել Հյուսիսային սառուցյալ ովկիանոսում: Նրանք կուտակեցին «հակասառուցային պաշտպանության» լավ վորձ և պատվով դուրս յեկան բոլոր վտանդավոր դրություններից: Յերբ դրեյֆող նավի եկիպաժը սառուցներում անցկացրեց արդեն մի տարուց այլեւի, առաջարկություն ծաղեց ուղարկել «Սեղովի» մոտ ողային եքսպեդիցիա թեկուղ անձնակազմի մի մասը փոխելու համար: Իմանալով այս մասին, սեղովականները ջերմ չնորհակալություն հայտնեցին ընկեր Ստալինին և Մոլոտովին հոգածարության համար և դիմեցին կառավարությանը, ինդրելով տմբողջ եկիպաժը թողնել նավի վրա մինչև դրեյֆի վերջը:

Կառավարությունը բավարարեց հերոսական ծովաղնացների խնդիրը: Ընկեր Ստալինն այնուամենայինի խորհուրդ տվեց պատրաստ պահել մի ծանր ինքնաթիւ: 1939 թ. գարնանից Ռուդոլֆի կղզում գտնվում ե ողաչու Որլովի չորսմոտորանի մոնոպլանը, վորը մինչև դրեյֆի վերջը պատվավոր հերթակառություն եր տանում և պատրաստ եր ցանկացած ժամանակ թուշել «Սեղովի» բնեուային ծովաղնացների մոտ:

Սեղովականները հանգիստ եյին իրենց ճակատագրի համար:

Նրանք գերծ ելին այն վախից ու յերկյուղից, վոր միշտ զգացել են կապիտալիստական աշխարհի բևեռախույզները:

Հիշենք թեկուղ խիզախ բևեռախույզը՝ անդիմացի կապիտան Սկոտափի կյանքի վերջին որեւը: 1912 թ. Հարավային բևեռից վերադառնալիս նա իր ուղեկիցների հետ վոչչացավ քաղցից և ուժապառությունից: Այս արիասիրու մարդուն, վորը դեպի Հարավային բևեռը կատարած եքսպերիցիայի ժամանակ դիմացավ հրեշտավոր փորձությունների, վորը բազմիցս կանգնած է յեղել մահվան դեմ-հանդիման, մինչև վերջին բոպեն չեր թողնում մենակության զգացմունքը, իր մերձավորների բախտի համար ունեցած յերկուղը:

Հուսահատության տրագիզմով են լցված նրա վերջին դրությունները: Սկոտաը գրել է.

«...Մենք սատկում ենք շատ անմիտար տեղում: Գրում եմ ձեզ հրաժեշտի նամակ այն հուսով, թե այս նամակը դուցե գտնվի և ուղարկվի ձեզ:

Խիստակն ասած յես ուզում եմ, վոր դուք ուզնեք իմ այրիին և իմ վրոգուն, վորը ձեր սանն ե.

...Յես թողնում եմ իմ խեղճ աղջկաս և ձեր սանին: Ուիլ-սոնը թողնում է այրիին, խակ եղանակ եղանակ նույնպես այրիին շատ թշվառ գրության մեջ: Արեք այն ամենը, ինչ հնարավոր և նրանց իրավունքները ճանաչելու համար: Մնաք բարե:

Մենակուլ, խնդրում եմ ձեզ, իմ թանգարին բարեկամ, բարի լինեք դեպի իմ այրիին և յերեխան: Կյանքում տղայիս ողնություն ցույց տվեք, յեթե պետությունն այլ չի ցանկանա անել...»

Յեկ ահա որագրում վերջին գրանցումը, վոր արել և մեռնող կապիտան Սկոտան իր ձեռքով.

«Ի սեր ասածու, մեր մոտիկներին մի թողնեք...»

Կապիտան Սկոտան ինքն իր բախտին եր թողնված: Պետությունը, ի փառ վորի նա կատարում եր իր սխրագործությունները, քիչ եր հետաքրքրվում իր խիզախ Հայրենակցով: Յեկ այնքան հասկանալի յե Սկոտափի յերկուղը, վոր նրա մահից հետո նրան մոտիկ մարդիկ բախտի քմահաճույքին կթողնեն...

Մենակության այս զգացմունքը, հասարակությունից, իր պետությունից կորչած լինելու զգացմունքն ուղեկցել և անցյալ բոլոր բևեռախույզներին:

Խորհրդային մարդկանց, գիտնականներին, հետազոտիչներին արդիսի զգացմունքներ անձանոթ են:

Սեղովականների խիզախ եքսպերիցիան հիանալի կերպով խմանում եր, վոր նրանց յուրաքանչյուր քայլին հետեւում և ամբողջ ժողովուրդը, կառավարությունը և ընկեր Ստալինը: Դրա համար ել նրանց աշխատանքը հաջող եր ընթանում: Նրանք հանդիսաւ ելին իրենց ճակատագրի համար, իրենց մոտիկների և Հարազատաների ճակատագրի համար: Դրանումն ե կայանում խորհրդային մարդկանց մեծ յերջանկությունը:

Յերբ «Սեղովի» դրեյֆն արագացավ, ընկեր Ստալինն առաջարկեց ժամանակին եքսպերիցիա կազմակերպել նավը սառուցների միջից հանելու համար: Դրեյֆող սառցահատ շոգենավին ընդառաջ դուրս յեկավ խորհրդային ամենահզոր սառցահատ «Ի. Ստալինը»: Նա Մուրմանսկից դուրս յեկավ դեկտեմբերի 15-ին և կուրս վերցրեց դեպի հյուսիս՝ Գրենլանդական ծովը, վորտեղ ություններորդ զուգահեռականից այն կողմը հանդիպեց «Սեղովին»:

Ստալինի անունով «Սեղովի» հերոսական եկիպաժը պայքար եր մղում Արկտիկայի դաժան բնության դեմ, Ստալինի անունով նա հաղթականուրեն ավարտեց իր պատմական գրեյֆը:

Ռադիոգրերից մեկում, յերբ «Սեղով» գտնվում եր կենտրոնական բևեռախույզ ավագանի սառուցներում, անվեճեր բևեռային ծովագնացները գրում ելին ընկեր Ստալինին.

— Զեր անունն, ընկեր Ստալին, հանդիսանում ե այն ուղեցույց ասալը, վորը մեզ հայրենիք կը երի վորակն հաղթողներ:

Իրենց խոսքը սեղովականներն ամուր ելին պահում: Նրանք պատվով կատարեցին ստալինյան առաջադրանքը:

Ութհարյուր որից ավելի տևեց կենտրոնական արկտիկայի սառուցներում տասնհինգ բևեռախույզին ծովագնացների անձնվեր հերոսական աշխատանքը: Շատ բան այն բոլորից, ինչ սեղովականներն ապրել և կրել են դրեյֆի քան ու յոթ ամսվա ընթացքում, հայտնի յե նավից ստացված ժլատ ուղղիոգրերից: Շատ բան ել մենք կիմանանք հերոսների հայրենիք վերադառնալուց հետո:

Սեղովականները կը երեն իրենց որագրերը, դիտական հետազոտությունների մատյանները, իրենց հավաքած ամբողջ ընդարձակ նյութը:

Քիչ ժամանակ չի պահանջվի դիտական հետազոտությունների խիստ արժեքալոր արդյունքները մշակելու համար: Գիտականները բացառիկ հետաքրքրությամբ սպասում են սեղովականների հետազոտությունների հրապարակմանը: Բայց արդեն այժմ,

Ճիշտ ե, ընդհանուր գծերով, կարելի յե տալ նրանց գիտական աշխատանքի համրագումարը:

Առաջավոր շատ յերկրներ մի շարք տասնամյակների ընթացքում փորձել են թափանցել Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսի կենտրոնական մասը, փորձել են իմանալ, թե ի՞նչ են ներկայացնում իրենից յերկրագնդի այդ անծանոթ և դժվարացմատչելի մարզը: Ամերիկացի Ռոբերտ Պիրիին հաջողվում ե մնալ Հյուսիսային բնեուում միքանի... Ժամ: Բևեռի վրայով թուզում են Բերդը, Նորիկն, Ամունդսենը: Այս բոլոր եքսպեդիցիաները չկարողացան քիչ թե շատ լիարժեք աշխատանք կատարել Սառուցյալ ովկիանոսի կենտրոնական մասի ուսումնասիրության վերաբերյալ:

Միայն ականավոր արկտիկ հետազոտիչ Ֆրիտյոֆ Նանսենին, «Ֆրամ» նավով նրա կատարած նշանավոր դրեյֆի ժամանակ (1893—1896 թ.թ.) հաջողվեց հավաքել չափազանց արժեքավոր դիտական նյութ, վորն սկիզբ դրեց Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսի ուսումնասիրությանը: Նանսենի տվյալները յերկար տարիներ ծառայել են վորակես Սառուցյալ ովկիանոսի կենտրոնական մասի վերաբերյալ մեր ունեցած գիտելիքների միակ աղբյուրը: Այս տվյալների վրա յե հիմնվել բնեուային և մերձբնեուային մարզերին վերաբերող յերիտասարդ գիտությունը: Բայց շատ բան մնացել ե մուլթ:

Ի դերև դուրս յեկան այն հույսերը, թե հետագա տարիները նոր լույս կափուն, բաց կանեն Արկտիկայի «գաղտնիքների» ծածկությը. «Ֆրամից» հետո յեղած բոլոր եքսպեդիցիաներն ըստ եյության վոչ մի նոր և քիչ թե շատ եյական բան բնեուային ավագանի ճանաչողության մեջ չմտցրին:

Միայն խորհրդային գիտությունը, վորը հենվում ե մեր յերկրի մեծ հզորության վրա, կարողացավ լուծել Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսի կենտրոնական մասի ուսումնասիրության խնդիրը: Հյուսիսային բնեուում գիտա-հետազոտական պարտիա իջնենելու գաղափարը խորհրդային մարդիկ իրագործեցին 1937 թվականին:

«Հյուսիսային բնեու» կայանի իննամսյա դրեյֆի արդյունքը յեղավ այն, վոր հավաքվեց մեծաքանակ նյութ Սառուցյալ ովկիանոսի կենտրոնական մասի այն մարզի հիդրոլոգիայի, գեոֆիզիկայի և բիոլոգիայի վերաբերյալ, վորը գտնվում ե բնեուի և դրենանդական ծովի հարավային լայնությունների միջև:

«Սեղովի» դրեյֆն ընդդրկեց Հյուսիսային Սառուցյալ ով-

կիանոսի մի այլ հսկայական մարզ, այն ե՝ Լաստելիների ծովից մինչև Գրենլանդական ծովը: «Սեղովի» հերոսական եկիպաժի կատարած գիտական հետազոտությունները շատ արժեքավոր ավանդ են Արկտիկայի ուսումնասիրության բնագավառում:

Հստ եյության միայն խորհրդային եքսպեդիցիաներն ու «Սեղովի» եկիպաժը վերջին տարիներս առաջին անգամ անցկացրին Սառուցյալ ովկիանոսի կենտրոնական մասի լիակատար հետազոտություններ:

Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսի կենտրոնական մասում կատարված հետազոտական աշխատանքները մեզ, խորհրդային բնեուազետներիս և Խորհրդային ամբողջ յերկրի համար առանձին հետաքրքրություն ունեն: Խորհրդային գիտությունը լայն ճակատով թափանցեց Սառուցյալ ովկիանոսի մինչև այժմ անմատչելի մարզերի բուն սիրտը: Այս հետազոտություններն այն մեծ ստեղծագործական աշխատանքի կարևորագույն ողակներից մեկն են, վոր Խորհրդային յերկիրը անց ե կացնում Ծայր Հյուսիսում:

Հյուսիսային ջրային մեծ մագիստրալի գիտական հետազոտության և պրակտիկ ոգտագործման նախաձեռնողն ու վողեշնչողն Խոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալինն է: Դեռ 1932 թ. ընկեր Ստալինի նախաձեռնությամբ Արխանդելսկից ուղարկվում ե «Ալեքսանդր Սիրիբյակով» նավով մի եքսպեդիցիա, վորի նպատակն եր գոնել Հյուսիսային ծովային ճանապարհը, այսինքն՝ մեկ նավիդացիայի ընթացքում, առանց ձմեռելու, անցնել հաղաղ ովկիանոս: Եքսպեդիցիան լիակատար հաջողությամբ վերջացավ:

Մի տարի անց նույն ույսը կրկնեց սառցահատ շողենավ «Զելյուսկինը». նա հասավ խաղաղ-ովկիանոսյան ջրերին, բայց սառուցների դրեյֆն այդ նավը յերինդյան նեղուցից հետ շպրտեց Չուկոյայն ծովը, վորտեղ նավը սառուցների կողմից ճգմվեց և ընկղմվեց ջրի տակ: Այսուամենայնիվ «Զելյուսկինի» արշավը կրկին ապացուցեց, վոր մեկ նավիդացիայի ընթացքում գործնականորեն հնարավոր և Հյուսիսային ծովային ճանապարհով անցնել Խաղաղ ովկիանոս: «Զելյուսկինի» խորակվելուց միքանի ամիս հետո Վլադիմիրոստոկից գուրս յեկավ դեպի Արկտիկա «Լիտկե» սառցահատը: Այս նավը մեկ նավիդացիայի ընթացքում, ինչպես և «Սիրիբյակով» և «Զելյուսկին» նավերը, կտրեցանցավ Հյուսիսային ծովային ճանապարհը, բայց հակառակ ուղղությամբ, այն ե՝ արևելքից դեպի արևմուտք:

Հարձակումն Արկտիկայի դեմ քանի գնում, այնքան ավելի լայն կերպով եր ծավալվում: Բոլշևիկյան կուսակցության XVIII համագումարի պատմական վորոշումները հստակորեն վորոշեցին խորհրդային բնեռախույզների առաջ կանգնած ինդիրները, այն է՝

«Յերրորդ հնդամյակի վերջում Հյուսիսային ծովային նաև ապարհը վերածել նորմալ կերպով աշխատող ջրային մադիստրալի, վորն առաջում և պլանաչափ կազ Հեռավոր Արևելքի հետ»:

Այս պատվավոր խնդրի շուրջը վագեորված աշխատում են խորհրդային բնեռախույզները: Համել(ը)Կ XVIII համագումարի վորոշումների իրադրժման ասպարեզում մեծ և շնորհակալ աշխատանք և կատարում գիտությունը: Այդ գիտությունը բնեռախույզ ծովագնացների համար նոր ուղիներ և գտնում, նոր գիտելիքներ և տալիս արկտիկ տարերքի դեմ վստահորեն պայքարելու համար:

1939 թ. մենք առաջին անգամ ձեռնարկեցինք Հյուսիսային ծովային ճանապարհի առևտրական նորմալ շահագործմանը: Արկտիկ ջրային մեծ մագիստրալով այս տարի նավարկել են 104 նավ, դանագան ուղղություններով փոխադրված և ավելի քան 100 համար տոնն բեռ: Տասնմեկ նավ կարել անցել են Հյուսիսային ծովային ճանապարհի ամբողջ տրասսը:

Յուրացնելով Հյուսիսային ծովային ճանապարհը, մենք վոչ մի բոպե չպիտի մուտանանք գիտության բացառիկ նշանակությունը: Վորպեսպի նավերը վստահորեն անցկացնենք Հյուսիսային ծովային ճանապարհով ցանկացած քանակությամբ և ցանկացած ուղղությամբ, անհրաժեշտ և ունենալ վոչ միայն լավ քարտեզներ, հուսալի ուղիության, սարքավորված նավահանգիստներ, այլև պահանջվում են ամենից առաջ սովորել մեր նավերի վտանգավոր թշնամու՝ բնեռային սառուցների դեմ սրայքարելը: Վորպեսպի սառցահատները կարողանան վստահորեն անցկացնել փոխադրանավերի քարավանները բնեռային ծովերով, անհրաժեշտ և լավ իմանալ այն որենքները, վորոնք կառավարում են սառուցների բաշխումը Արկտիկայում: Կարայան, Լապտեվիների, Արևելասիրիական և Զուկոտյան ծովերի սառուցե ծածկույթը տարեցտարի չափաղանց փոփոխական ե: Սառուցի քանակը, այդ սառուցի բաշխումն այս ծովերում չատ սերտ կերպով կապված է ծովային այն հոսանքների ու քամի-



Սառցահատի կապիտան
Կոնստանտին Սերգեյիվիչ
ԲԱԴԻԳԻՆ



Սառցահատի բաղոքնական
Դմիտրի Գրիգորյեվիչ
ՏՐՈՖԻՄՈՎ



Յերկրորդ մեխանիկ
Սերգեյ Դմիտրիեվիչ
ՏՈԿԱՐԵՎ



Յերրորդ մեխանիկ
Վահվուղի Ստեփանովիչ
ԱԼՖԵՐՈՎ

ների հետ, վորոնք աիրապետում են ծովի այս կամ այն ռայոնում:


Տարեցտարի մէնք արշավախմբերի միջոցով հետապոտում
ենք խորհրդային Արկտիկայի ծովերը, ուսումնասիրում ենք
հիղբումնետերուղիական սեժիմը, այն և՝ ծովային հոսանքները,
քամիները, սառուցների դրեյֆը։ Այս ծովերը, վորոնք հանդի-
սանում են Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսի ծովածոցեր,
չատ սերտ կախումն ունեն ովկիանոսի կենտրոնական մասի հիղ-
բումնետերուղիական սեժիմից։ Սառուցե ծածկույթի բարոր
փոփոխությունները հասկանալու համար, հուսալի սառցային
պրոգնոզ կատարելու համար (այսինքն ծովերում հնարավոր
սառցային իրադրությունը գուշակելու համար) պետք է իմանալ,
թե ինչ է կատարվում Սառուցյալ ովկիանոսի կենտրոնական
մասում։

Ահա թե ինչու Հյուսիսային ծովային տրասսը յուրացնելու համար այդքան անհրաժեշտ են վոչ միայն ծայրամասային ծովերի հետազոտությունները, ծովեր, վորոնց միջով նա անմիջապես անցնում է, այլև Հյուսիսային Սառուցյալ ամբողջ ովկիանոսի ուսումնառությունը։ Ահա թե ինչու «Սեղով» սառցահատ շոգենամալով կատարված եքսպերիմենտները և ուսումնասիրություններն այդքան մեծ նշանակություն են ստանում Հյուսիսային ծովային ճանապարհը յուրացնելու համար։

«Սեղովի» պանծալի եկիպաժը, վարը բազկացած և ընդամենը 15 մարդուց, վիթխարի դիտա-հետազոտական աշխատանք կատարեց: Այդ աշխատանքի նշանակությունը Հյուսիսային ծովային ջանապարհը վերջնականապես գործնականութեն յուրացնելու և այն նորմալ կերպով գործող ջրային մագիստրալի վերածելու համար չափ մեծ է:

ՍԵղովականներն իրենց գրեյքի ճանապարհին կատարել են միքանի տասնյակ խորածուր չափումներ։ «Սեղովի» չափումները ճշտիվ պարզել են լավաբեշիների ծովի ցարմաքային ծանծառութիւնները, այսինքն այն սահմանը, վոր կա այս համեմատարար ծանծաղաջուր ծովի և խոր Բեեռուային ավագանի միջն։

«Սեղովի» չափումները Սառուցյալ սլկիանոսում հայտաբերել են այնպիսի խորություններ, վորոնք զբաղեցրեն ավելի յին, քան մինչև այժմ հայտնի խորությունները։ 86 աստիճան 37 րոպե հյուսիսային լայնության և 45 աստիճան 5 րոպե արևելյան յերկարության վրա սեղովականները հայտաբերել են 4,952 մետր խորություն։ Մի փոքր սլկիանոսում 86 աստիճան 27



բողե լայնության և 39 աստիճան 25 բոսկե յերկարության վրա ովկիանոսի խորությունը դուրս յեկալ ավելի քան 5,180 մետր, իսկ 86 աստիճան 23,5 բոսկե լայնության և 38 աստիճան 25 բոսկե յերկարության վրա խորության չափումը տվել է 4,980 մետր: Այդ գգալիորեն ավելի յէ, քան առավելագույն այն խորությունը, վոր չափել ե «Հյուսիսային բևեռ» կայանը (4,395 մետր):

Ինչ վերաբերում է այն միակ չափումին, վոր ավելի յէ, քան «Սեղովի» հայուսարերած խորությունը, այն և՝ եխոլոտի միջոցով կատարված այն չափումը (5,440 մետր), վորը կատարել ե ամերիկացի արկտիկ հետազոտիչ Հուրերտ Վիլկինսը 77 աստիճան 46 բոսկե հյուսիսային լայնության և 175 աստիճան արևմտյան յերկարության վրա—ապա այս չափման ճշտությունը մեծ կասկածներ և հարուցում և ինքը Վիլկինսն իր տվյալները հուսալի չի համարում:

Սեղովականները գիտողություններ են կատարել յերկրային մագնետիզմի տարրերի վրա իրենց դրեյֆի 78 կետերում: Նրանք կատարել են նաև որական գիտողությունների 10 սերիա մագնիսային թեքման փոփոխությունների առթիվ: Այս տվյալները կծառայեն վորպես չափազանց թանըարժեք նյութ Սառուցյալ ովկիանոսի իննոտրոնական մասի ճիշտ մագնիսական քարտեզներ կազմելու համար, վորոնք այնքան անհրաժեշտ են ծովային և ողային նավերի շտուրմանների համար:

Ամբողջ դրեյֆի ճանապարհին սեղովականները դիտողություններ են կատարել ծանրության ուժի արագացման վերաբերյալ: Այս հետազոտությունները, վորոնք կատարվել են նորագույն գործիքների ողնությամբ, դգալիորեն ավելի ճիշտ են, քան նաև նիստի կատարած հետազոտությունները «Ձրամ» նավի վրա: «Հյուսիսային բևեռ» կայանի ժողոված տվյալների հետ միասին սեղովականների հետազոտությունները չափազանց թափարժեք նյութ են մատակարարում բարձրագույն գեղեցիկայի ինդիքը լուծելու, այն և՝ յերկրագնդի ճիշտ ճեր վորոշելու համար: Բացի այդ, այդ հետազոտությունները շատ թանդարժեք նյութ են մատակարարում յերկրագնդի կեղեւի կազմության մասին դատելու համար:

Սեղովականների գիտական հետազոտությունների արժեքն ավելանում ե նրանով, վոր «Սեղովի» դրեյֆը և ուրեմն կատարված բոլոր դիտողությունների ավյալները մեծ ճշտությամբ անց են կացվել քարտեզի վրա չորհիվ աստղաբաշխական մեծ քանա-



Առաջին կարգի մեքենավար
Նիկոլայ Սերգեյևիչ
ՇԱՐԻՊՈՎ



Առաջին կարգի մեքենավար
Նատալիա Մարկովնիչ
ՆԵԶՎԵՅՉԿԻ



Ավագ ռադիոս
Ալեքսանդր Ալեքսանդրովիչ
ՊՈԼՅԱՆՍԿԻ



Ռազիստ
Նիկոլայ Միխայլովիչ
ԲԵԿԱՍՈՎ

կությամբ վորոշումների, վոր կատարել և յերիտասարդ գիտնական հիղը գիտողական վ. Խ. Բույնիցիկին:

Ամենից ավելի արժեքավոր աշխատանքներն եքսպերիցիայի մետեորոլոգիական և հիդրոլոգիական աշխատանքներն են: Սեղովականներն ամբողջ դրեյֆի ընթացքում կատարել են կանոնավոր մետեորոլոգիական դիտողություններ, վերցնել են ավելի քան 40 խորածութ հիդրոլոգիական կայաններ: Այս դիտողություններն առանձնապես հետաքրքրական են, վորովհետև «Սեղովի» ընթացել ե «ֆրամին» գուգահեռ և նրանից ավելի հյուսիս, իսկ մի չափ կետերում կարել անցել ե «ֆրամի» դրեյֆի գծերը: Այդ հնարավորությունն ետքավածակալու այն դիտողությունների արդյունքը, վոր կատարել են «ֆրամը» և «Սեղովը»:

Հետազոտությունների այսպիսի համեմատությունը հաստատում է, վոր Արկտիկան դդալի չափով տաքացել է: Այսպիս, որինակ, «Սեղովի» դրեյֆի ուսունում ողի ձմեռային ջերմաստիճաններն ավելի բարձր են, քան այն ջերմաստիճանները, վոր դեմել ե «ֆրամի» եքսպերիցիան:

Նաև իր դրեյֆի ժամանակ հայտաբերեց, վոր Ատլանտյան ովկիանոսի տաք ջրերը թափանցում են Հյուսիսային Սառուցյալ ովկիանոս: Նա այդ ջրերին հետևել ե իր դրեյֆի ճանապարհին 200 մինչև 800 մետր խորության վրա: «Սեղովի» տվյալները ցույց են տալիս, վոր ատլանտյան ջրերի ջերմաստիճանները 1937—1939 թվականներին ավելի բարձր են ատլանտյան ջրերի նույն հոսանքի 1893—1896 թվականների ջերմաստիճաններից: Ներկայումս, ըստ յերևութիւն, դիտվում ե ատլանտյան ջրերի ավելի ինտենսիվ առհօսում դեպի Սառուցյալ ովկիանոսը և սառուցների ավելի ինտենսիվ արտահոսում ովկիանոսից դեպի Գրենլանդական ծովը, Գրենլանդիայի ու Շվեյցարիանի միջև յեղած լայն նեղուցի միջով: Այդ հաստատվում ե նաև «Սեղովի» ու «ֆրամի» արագությունների համեմատությամբ: «Սեղովի» դրեյֆի միջին արագություններն զգալիորեն ավելի բարձր են «ֆրամի» արագություններից:

Իր ժամանակին նաև պարզեց, վոր սառուցի դրեյֆի արագությունը ուղղակի կախված է քամու արագությունից: «Սեղովի» դրեյֆին այս դրույթը հաստատեց: Քամու գործակիցը մնում է մոտավորապես նույնը և հավասար է 50-ի: Այդ նշանակում է, վոր սառուցի դրեյֆի արագությունը մոտ 50 անգամ պակաս է այն քամու արագությունից, վոր առաջ է բերել



տվյալ դրեյֆը: «Սեղովի» եքսալեղիցիան հաստատել է նաև Նանսենի պարզած այն հանդամանքը, վոր սառուցի դրեյֆը քամու ուղղությունից շեղվում է մոտավորապես 30—40 աստիճան դեպի աջ:

Նախնական տվյալների հիման վրա ուսումնասիրելով «Սեղովի» դրեյֆը՝ մեր գիտնականներն արդեն այժմ լրացրել են Նանսենի սահմանած որենքները նոր, գիտության համար շատ լուրջ ընդհանրացումներով:

Մասնավորապես պրօֆեսոր Ն. Ն. Զուբովը կարևոր որինաչափություն են հանել: Դուրս ե գալիս, վոր սառուցի դրեյֆի ուղղությունը գրադիտում է իղորանների (դեկը, վորոնք միացնում են մթնոլորտային հավասար ճնշման կետերը) ուղղությունը: Այդ բացարձում է նրանով, վոր գրեյֆն առաջ բերող քամին յերկրի պտտմելու չնորհիվ համապատասխան իղորարից շեղվում է դեպի ձախ մոտավորապես 30—40 աստիճանով: Իսկ սառուցների դրեյֆը, համաձայն դեռ Նանսենի սահմանած կանոնների, իր հերթին քամուց շեղվում է նույնապես մոտ 30—40 աստիճան, բայց դեպի աջ: Հետևանքը լինում է այն, վոր սառուցների դրեյֆն ընթանում է դրեյֆին զուգահեռ:

Այսպիսով սառուցների դրեյֆը Հյուսիսային Մասուցյալ ովկիանոսում գլխավորապես վորոշում է մթնոլորտի բարձր ու ցածր ճնշման մարզերի բաշխումով: «Սեղովի» դրեյֆի անալիզը լիովին հաստատում է այս հիմնալի կանոնը:

Այժմ գիտությունը նոր հնարավորություն է ստացել ուսումնասիրելու կենտրոնական բնեուային ավաղանի սառուցների շարժումը:

Մենք մեր տրամադրության տակ ունենք մետեորոլոգիական կայանների բավական խիստ ցանց, վորը թույլ ե տալիս ուշադրությամբ հետեւ մթնոլորտային ճնշման բաշխմանը: Իսկ այդ եր հերթին հնարավորություն է տալիս դատել բնեուային սառուցների դրեյֆի մասին:

Մասուցյան ծածկութը ներկայանում է վորպես մի հըսկայական բլին, վորը ծածկում է ովկիանոսի կենտրոնական մասը: Յեթե չնորհիվ համապատասխան քամիների ներդործության այդ բլինը մեր ամերից մի կողմ է շարժվում, մենք իրավունք ունենք սպասել նախագնացության համար բարենպատ սառցային պայմաններ Հյուսիսային ծովային ճանապարհի տրաստում, Ընդհակառակը, յեթե բնեուային սառուցները շարժվում են դեպի ծովափը, տրաստում սառցային պայմանները խիստ վատա-



Հիդրոգրաֆ
Վիկտոր Խարլամպիեվիչ
ԲՈՒՑՆԵՑԿԻ



Կապիտանի ավագ ոգնական
Անդրեյ Գեորգիինիչ
ՅԵՖՐԵՄՈՎ



Բժիշկ
Ալեքսանդր Պետրովիչ
ՍՈԲՈԼԵՎԻ



Բոցման
Գևորգի Պրոկոփյեվիչ
ԲՈՒՏՈՐԻՆ

նում են: Այս կանոնը, վոր սահմանվել է «Սեղովի» դրեյֆի հետման վրա, մի չափազանց արժեքալոր աշանդ և Հյուսիսային ծովային ճանապարհի տրաստում սառցային ծածկույթի հնարավոր վորովառությունները նախագուշակելու վործում և շատ կարևոր են նաև ավարության համար:

«Սեղովի» եքսպեդիցիայի դիտողությունները, վորոնք պարզել են, վոր ատլանտյան ջրերի հետ Հյուսիսային Սառուցյալ ովկիանու մտնող տաքությունն զգալի չափով ավելացել է, սառցային ծածկույթի հաստությունը նկատելի չափով պակասել է, սառուցյան արտահոսումը բեկուային ավագանից արագացել է, ինչպես և մի շարք այլ ավագաներ, այս բոլորը մի խոշոր ավանդ են սառցային պրոդնողների դեռ յերիտասարդ դիտության մեջ:

Աչա թե ինչու խորհրդային բևեռախույզներն այդպիսի անհամբերությամբ սպասում են «Սեղովի» եքսպեդիցիայի հավաքած բոլոր նյութերի մշակմանը:

Սեղովականների սխրագործությունը մոտիկ ե խորհրդային յուրաքանչյուր մարդու այն պատճառով, վոր նրանց որինակը մի անգամ ևս ցույց է տալիս, թե ինչով և ուժեղ Խորհրդային յերկիրը:

Յերբ սեղովականների կենսագրությունները, այն սեղովականների, վորոնք հիմնականում դեռ բոլորովին յերիտասարդ մարդիկ են, համեմատում ես հին բևեռախույզների, թեկուդ հենց նույն Նանսենի, կենսագրությունների հետ, չե կարելի չնկատել եյական տարբերություն: Նանսենը վոչ միայն տաղանդավոր գիտնական է յեղել, այլև հիմնալի սպորտամեն: Նա յերկար տարիների ընթացքում մարզվել է հատկապես բևեռային դժվար եքսպեդիցիաների համար: Նա շատ տարիներ պատրաստվել է «Ֆրամի» վրա գրեյֆելու համար: Նանսենը, ինչպես և մյուս բևեռախույզները, հանդիսացել ե միայնակ մի մարդ և գտնվել են մարդիկ, վորոնք նրան դիտել են մարդկային ցեղի մի հաղթագուտ նմուշ, վորն ընդունակ ե կատարել սովորական մարդու համար անհավատալի սխրագործություններ:

Բոլորովին այլ բան են սեղովականները: Հենց «Սեղովի» դրեյֆը հարկադրված դրեյֆ եր: Ինչպես հայնի յե, «Սեղով» մնաց մենակ դրեյֆելու միայն այն պատճառով, վոր զեկու վնասվելու հետևանքով չկարողացավ հետևել «Յերմակ» սառցահատին, վորը 1938 թ. սեպտեմբերին ծանր սառուցների միջից հեղքել անցել եր դեպի յերեք նավերի դրեյֆող քարավանը:



«Սեղովի» եկիպաժը՝ 15 խորհրդային ծովագնացներ՝ չեր յենթագրում այդքան ծանր ճանապարհ կտրել և այդ բանի համար չեր նախապատրաստվել: Սեղովականները սովորական խորհրդային մարդիկ են, վորոնցով հարուստ և մեր յերկիրը, և այդ մարդիկ իրոք վոր հերոսական գործ կատարեցին:

Համեմատելով «Սեղովի» ու «Փրամի» ճանապարհորդությունները, չպետք ե մոռանալ, վոր «Փրամը» նանսենը կառուցել եր հատկապես Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսում դրեյֆելու համար: «Փրամը», ընդամենը 31 մետր յերկարություն ունեցող այդ նավը, այնպէս եր կառուցված, վորպեսզի նավը նույնիսկ ամենաուժեղ սեղմումի դեպքում չխորտակվի. չնորհիվ կորածուսի ձվածեռության «Փրամը» սեղմումի դեպքում սառուցների կողմից դուրս եր մղվում դեպի մակերես: Նանսենը լիովին նրալացի յեր, յեր դրում եր. «Հաճելի յե դիտակցել, վոր նավը ամուր ե, ուրիշ նավեր վաղուց արդեն ճղմված կլինելին: Սատանան տանի, բոլորովին կոմֆորտաբել չեր լինի, յեթե ամեն անդամ, յերբ սկավում ե փոքրիկ ճնշում, պատրաստվելինք նավը թողնելու, կամ յեթե պարկը մեջքներիս այն թողնելինք, ինչպէս «Տեղեատուոփի» եկիպաժը»:

Այլ բան ե «Սեղովը»: Սա մի սառցահատ չողենավ ե, վորն ունի բավական ամուր կողեր ցանցառ սառուցների մեջ լողալու համար: Բայց ուժեղ սեղմումի դեպքում նավը կարող եր խորտակվել: Իսկ սեղմումները «Սեղովի» դրեյֆի ռայոնում մշտական յերեռույթ ելին:

Մենք բոլորս հաստատուն յերկը վրա մի տեսակ սովորել ենք «Սեղովի» մասին յեղած կարծ հաղորդումներին, թե «նավի ձախ կողմի մոտ նկատվել ե տորոսացում», «նավի հետեւ կաղմագել ե տորոսացած սառուցի թարմ թումբ»... Բայց այս ժլատու հանդիսատ տողերի ընթերցման ժամանակ յես մտարեցում եյի այն զգայությունները, վորոնք կապված են թեկուզ «Զելյուսկինի» ձմեռելու հետ, յերբ այդպիսի լակոնիկ Փրազները պատկերացում ելին առաջ բերում սառուցի տագնապալից ու ձանձրացուցիչ ճոնչյունի ու ճոճոցի մասին հենց նավակողերի մոտ, սառուցի՝ նավակողերին քավելու ու կրծտելու մասին... «Զելյուսկինը» դրեյֆեց միքանի ամիս, իսկ «Սեղով» սեղմումի սպատնալիքի տակ անցկացրեց ավելի քան յերկու տարի: Սակայն սեղովականների հեռագրերում յերեք անհանդասության նշույլ անդամ չի յեղել իրենց կյանքի վերաբերյալ:

Սեղովականները կարող ելին հանդիսատ ապրել ու աշխատել



Առաջին կարգի նավաստի
Յեֆրեմ Խվանովիչ
ԳԱՄԱՆԿՈՎ

Առաջին կարգի հնոցապան
Խվան Խվանովիչ
ԳԵՏՍՄԱՆ



Խոհարար
Պավել Վլատվիչ
ՑԵԳԵԲ

այն պատճառով, վոր նրանք խորհրդային մարդիկ եյին, վորովհանքանը ամեն որ, ամեն բոպե հիշում եյին, սառուցների գրեյֆը վորքան ել նրանց հեռուները հացներ, հայրենիքը նրանց դժբախտության մեջ չել թողնի:

1938 թ. հոկտեմբերի 24-ը սեղովականների համար կմնա ընդմիշտ վառ, անմոռանալի որ: Այդ որն ընկեր Ստալինն ու ընկեր Մոլոտովը սեղովականներին ուղղած իրենց վողջույնի մեջ գրում եյին. «Մենք հավատացած ենք, վոր խորհրդային մարդկանց բոլցեկիյան հաստատակամությամբ դուք կհաղթահարեք ձեր ճանապարհին յեղած բոլոր դժվարությունները և կվերադառնաք հայրենիք վորպես հաղթողներ»:

Ընկեր Ստալինի և ընկեր Մոլոտովի այս խոսքերը սեղովականներին ջերմացնում եյին ամբողջ յերկար գրեյֆի ընթացքում: Այս խոսքերը սեղովականներն զգում եյին խորհրդային բոլոր մարդկանցից մեր անծայրածիր հայրենիքի բոլոր անկյուններից ստացված ամեն մի վողջույնի մեջ, ամեն մի հեռագրի մեջ:

Մի տարի անց ընկեր Ստալինն ու ընկեր Մոլոտովը սեղովականներին նորից մաղթեցին առողջություն, բոլոր ձախորդությունների հաղթահարում, վերադարձ գեպի հայրենիք Արկափկայի դժվարությունների դեմ մղած պայքարի մեջ թրծված:


Սեղովականների ուժը—այդ խորհրդային բոլոր այն մարդկանց ուժն ե, վորոնք ջերմ կերպով նվիրված են իրենց հայրենիքին, իրենց կյանքը չեն ինայում, վորպեսզի արդարացնեն ժողովրդի, կուսակցության, մեծ Ստալինի վստահությունը:

Սեղովականների սիրագործությունը—այդ խորհրդային ժողովրդի սիրագործությունն ե, խորհրդային պատրիոտիզմի նմուշ ե:


Ահա թե ինչու մեր ամբողջ յերկիրն այնպիսի անհամբերությամբ սպասում ե իր խիբախ զավակների վերադարձին դեպի հայրենիք և նրանց դիմավորում ե գրկաբաց:

Մեծ հողում տասնհինգ խորհրդային հայրենասերներն այլին ևս ուժեղ կերպով կզգան ժողովրդական այն սերը, վոր աշխարհիս բոլոր գանձերից ալելի թանդ ե:





812 ՈՐ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՐԿՏԻԿԱՅՈՒՄ



ՍԵՐԻՎԱԿԱՆՆԵՐԻ ՍԽՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

առ քչերին ե հաջողվում թափանցել կենտրոնական Արկտիկա: Հավիտենապես զբերող սառուցների այս յերկիրը, վորը վազուց իվեր հրապուրել ե թե՛ անշահախնդիր գիտնականների—լուրջ հետազոտիչների, թե՛ փառասիրական նպատակներ հետապնդող բախտախնդիրների, անփույժ մարդկանց չի հանդուրժել: Այս վերջինները հեռուն գնալ չեն կարողացել. արդպիսի մարդիկ կա՛մ հետ են նահանջել, կա՛մ պարտվել և վոչնչացել են: Հեռավոր Հյուսիսում հաղթել են միայն յերկաթե կամքի տեր մարդիկ, իսկական խիզախորդները, չանասեր ու համառ հետազոտիչները:

Կենտրոնական բևեռային ալիքանի սառցային տարածություններին համար շատ միջոցներ են փորձվել: Մարդիկ այնտեղ են ձգտել թե՛ վուրզով, թե՛ չներ լծած, թե՛ սառուցների մեջ սառած նավերով, թե՛ ողանավերով, թե՛ սուրբանավերով...

Առաջները կարծում եյին, թե մերձբևեռային անծանօթ և դժվարամատչելի մարզը սառուցների միջև թաղղում ե հողեր ու հարստություններ: Յերկար տարիներ գիտնականները վիճել են այն մասին, թե բևեռի մոտ ինչ ե ընկած՝ ցամաք թե՛ ծով,

սառուց թե ջուր... Միքանի դար անգառուղ ե մնացել հյուսիսային սառուցյալ ծովերը վորպիս Ատլանտյան ովկիանոսից դեպի հաղաղ ովկիանոսը, Յեվրոպայից դեպի հեռավոր Հնդկաստանը տանող ամենակարծ ջրային ճանապարհ ոգտագործելու միտքը:

Ապա գիտությունը պարզեց կենտրոնական բևեռային այն ովկապանի սահմանները, վորը ծածկված ե հարաշարժ, մշտապես դրեյֆող սառուցներով: Առաջին նավերը դժվարությամբ ելին անցնում սառուցների միջով, ապացուցելով Հյուսիսային-Արկտիկայի առաջանական կորցնում եր այն «խորհրդագավոր» լուսապատճենը, վորով նա յերկար դարեր ըրջապատճեն ե յեղել:

Սա այն բազմաթիվ բևեռախույզների հսկայական ծառայությունն է, վորոնք իրենց աշխատանքն ու կյանքը չեն խնայել Արկտիկան ուսումնասիրելու համար: Սակայն կենտրոնական բևեռային ալիքան ամրող ժամանակի ընթացքում կարողացել են թափանցել միայն սուանձին մարդեկ:

Սրանից քառասուն ու հինգ տարի առաջ Հյուսիսային սառուցյալ ովկիանոսի սառուցներում գիրեյֆել և «Ֆրամը»—արխասիրա բևեռախույզ դժվարական Ֆրիտյոֆ Նանսենի եքսպեդիցիոն նավը: Նա իր ժամանակի համար չլուրած համարձակությամբ փորձ կատարեց հասնել ամենարարձ գուգահեռականներին բևեռային սառուցների մեջ սոսած նավի վրա:

Նանսենի եքսպեդիցիոն հիմնվում եր ճիշտ գիտական հաշիվ-ների վրա: Վազուց արդեն նկատվել եր, վոր Ամերիկայի Հյուսիսարևեմայն ծովափում պատրաստվող սոսածին առարկաները դուրս ելին դալիս Փրենլանդիայի, Բուլանդիայի ու Նորվեգիայի ափերին: Այս առարկաները կարող ելին այստեղ ընկնել կարելով յերկար ճանապարհ այն սառուցների հետ, վորոնք շարունակ շարժվում են քամիների ու հոսանքների աղղեցության տակ:

«Ֆրամի» եքսպեդիցիոն մեքանի տարի առաջ Նոր-Սիբիրական կղզիների մոտ սառուցները ձգմերով խորտակեցին Դելոնդի եքսպեդիցիայի «Ժաննետա» նավը: Անցավ յերեք տարի, և Փրենլանդիայի հարավային ափերի մոտ գտնվեցին սառուցի մեջ սոսած այն իրերը, վորոնք պատկանելիս են յեղել վողբերդական ձեռով կորած եքսպեդիցիայի մասնակիցներին: Կաոկած չկար, վոր այդ իրերն այստեղ ելին բերել այն սառուցները, վորոնք, ինչպես յենթաքրում եր Նանսենը, իրենց ճանապարհին կարել անցել ելին անմատչելի աշխարհագրական կետ—Հյուսիսային բևեռը:

Նանսենը վորոշեց կրկնել այդ ճանապարհը: «Ֆրամ» նավը, վորը կառուցվել եր հատկապես սառցային դրեյֆի համար, սառցաների մեջ սառեց Նոր-Սիբիրական կղզիների մոտ: Նավն սկսեց սառուցների հետ միասին շարժվել գեղի հյուսիս: Համարձակ հետազոտիչի յենթալը ուժուները սխալ դուրս յեկան՝ «Ֆրամ» բևեռին չհասավ: Նա անցավ Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսի ծայրամասերով միայն և 86-րդ զուգահեռականից վեր չըարձացավ: Բայց այն, ինչ մարդկությունն իմացավ Արկտիկայի մասին եքսպեդիցիայի վերադառնալուց հետո, մի հսկայական ամվանդ եր գիտության մեջ:

Նանսենը պարզեց, վոր Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսը մի խոր սվազան ե, վորի խորությունը հասնում է մինչև 4 հազար մետրի: Նա ավագուցեց, վոր այստեղ, հեռավոր Հյուսիսային մարզերը, հաստ սառուցների տակից թափանցում են Առլանտյան ովկիանոսի տաք ջրերը: Նանսենը վորոշեց այն որենքները, վոր կառավարում են սառուցների գրեյֆը, և հիմնեց մարդկային գիտության մի նոր ճյուղ, այն և՝ արկտիկ գիտությունը:

Այն գիտական հայտնագործությունները, վոր Նանսենը կատարեց Արկտիկայում, միքանի տասնամյակների ընթացքում. մոտը եյին վորպես միակ հայտնագործությունները: Առաջվանման Արկտիկան վախեցնում եր մարդկանց, և նույնիսկ այն մարդիկ, վորոնք իրենց կյանքը նշիրում եյին բներային ու մերձբենուային մարզերի ուսումնասիրությանը, ամերիկացի կեյնի նման իրենց որագրում գրում եյին.

«Բևեռային յերկրներում մի որ ու գիշերը մարդուս վրա ալելի թանգ և նստում, քան յերկրագնդի ինչ յերկրում ուզում և լինի ամբողջ տարիները...»

Արկտիկայի ուսումնասիրության ու յուրացման պատմության մեջ նոր եջեր են գրել խորհրդային մարդիկ, խորհրդային հետազոտիչները:

Իսուիֆ Վիսսարիոնովիչ Ստալինի նախաձեռնությամբ ու զեկավարությամբ Խորհրդային յերկրը մի շարք տարիների ընթացքում համառ պայքար և մղում Հյուսիսային ծովային ուղին յուրացնելու համար՝ ջրային այն մագիստրալի համար, վորը միացնում ե Բարենցի ծովը Խորհրդային ովկիանոսի հետ: Հյուսիսային մեծ արածում, վորը գեռ վերջերս համարվում եր անանցանիլ, այժմ լողում են տասնյակ նավեր, ստեղծվում են նավահանդիստներ: Խորհրդային մարդիկ անդուր կերպով աշխատում

են բեկուային կայաններում: Արկտիկայում թուզում են ինքնաթիւններ: Բեկուային հանքափորները հանում են ածուխ և ծորաքար: Յերկրաբանները հետախուզում են նալլթ և աղ:

Բոլեկիկներն ամուր վուաք են գրել արկտիկ ցամաքը, վորպեսպի նավերը լավ ընթանան բեկուային ծովերով, խորհրդային ինքնաթիւնները լավ թուչեն Ծայր Հյուսիսում:

Հյուսիսային ծովային ճանապարհը լիովին յուրացնելու և ԿՍՀՄ-ն Հյուսիսային Ամերիկայի հետ միացնող անդրբեկուային մեծ ողային ուղի հաստատելու ինդիբները խորհրդային գիտնականներին դրդեցին գրոհի գուրս դալ բեկուի դեմ:

Ընկեր Ստալինին ե պատկանում Հյուսիսային բեկուի սառուցների վրա գրեյֆող գիտական կայան ստեղծելու նախաձեռնությունը, մի բան, վորն առաջ նույնիսկ ամենահամարձակ բեկուախուզներն անիրազործելի յերազ եյին համարում: Խորհրդային ողաչուները Հյուսիսային բեկուայի գեսանու իջեցրին: Նրանց համար այնտեղ վոչ վոր աերոդրոմները չեր պատրաստել, վոչ վոր վայրեջքի նշաններ չեր փոել... Բայց ինքնաթիւնները նստեցին շարժվող բեկուային սառուցների վրա նույնքան անթիւրի կերպով, վորքան մայրաքաղաքի սարքալորված աերոդրոմի հարթ դաշտի վրա:

Խորհրդային վառապանծ հետազոտիչներ իվան Դմիտրիյեվիչ Պապանինը, Պյոտր Պետրովիչ Շիրշովը, Երնստ Տեղոդրովիչ Կրենկելը և Յեկանի Կոնսուանտինովիչ Ֆյոդորովը պատվով կատարեցին ստալինյան առաջադրանքը: Նրանք 274 որ մնացին դրեյֆող սառուցի վրա, վորն այդ ժամանակմիջոցում անցավ մի հսկայական տարածություն սկսած Հյուսիսային բեկուայի մինչև Գրենլանդական ծովի հարավային լայնությունները և ամեն որ կատարում եյին գիտական դիտողությունների ընդարձակ ծրագիր:

Ընկեր Ստալինը մատնանշեց, վոր Պապանինն ու պապանինականները տապալեցին Արկտիկայի մասին յեղած հին պատկերացումը, վորպես հնացած պատկերացում և սահմանեցին նոր, իսկական գիտության պահանջներին համապատասխանող պատկերացում:

Այն որերին, յերբ «Հյուսիսային բեկու» դրեյֆող կայանը, գեպի հարավ շարժվելով, մոտենում եր 84-րդ զուգահեռականին, հեռու արեկելքում սկսվեց «Գեորգի Սեղով» սառցահատ շոգենավի դրեյֆը: Լապտեվների ծովում սառուցներով շրջապատված նավը քանի գնում, այնքան ալելի յեր գեպի հյուսիս

շարժվում և կտրում անցնում եր այսպիսի ռայոններով, վորոնք սահմանակից են «անմատչելլության բեկորն»:

«Սեղովը», վորը վերածվել եր շարժական գիտահետազոտական բևեռային կայանի, սառուցների հետ միասին անցավ մի հոկտեմբերի տարածություն՝ Նոր-Միջիրական կղզիներից մինչեւ Գրենլանդական ծովը:

Խորհրդային մարդիկ, տասնհինգ շաբաթին բևեռախույզ ծովագնացներ, լենինյան-ստալինյան կոմյերիստիության և բոլշևիկյան կուսակցության սաներ, սառցային դրեյֆի ծանր պայմաններում յերեւնի գիտական աշխատանքներ կատարեցին։ Սեղովականների գիտողություններն զգալիորեն ընդլայնում են մեր սուածավոր հեղափոխական գիտության գիտելիքները, վերծանում են Բևեռային ալպականում բազմաթիվ մությ յերեռությներ, վորոնց ճանաչողությունը շատ արժեքավոր բան կտա Արկտիկայի հետազանական համար։


Սեղովականների գիտական սխրագործությունը մոտիկ է թանգ և խորհրդային յուրաքանչյուր հայրենասերի սրտին, վորովհետև սմբողջ ժողովուրդը «Սեղովի» տասնհինգ ծովագնացներին համարում է իր գավակները, վորոնք պատվով են կատարել հայրենիքի, կուսակցության, կառավարության, ընկեր Ստալինի սուածագրանքը։

Խիզախ սեղովականների դրեյֆի պատմության որինակով մարդիկ կսովորեն համարձակություն դժվարությունների դեմ մղած պայքարում, կսովորեն համար և անձնուրաց աշխատանք ի վառ խորհրդային հայրենիքի։

ՍԱՌՈՒԽՆԵՐԻ ԳԵՐՈՒԹՅԱՆ ՄԵջ

1937 թ. ուշ աշնանը Լապտեվիների ծովում աշխատում եիին «Սեղով», «Սալկո» և «Մալիկին» սառցահատ չողենավերը։ «Սեղովի» և «Սալկոյի» վրա գտնված գիտական եքսպերիմենտը հետազոտություններ եիին կատարում ծովի արեւելյան մասում։ «Մալիկինը» վոխսագրանավերին ողնում եր սառուցների միջից ճանապարհ բանալու դեպի սիրիրական գետերի գետաբերանները և իրենց բևոները հասցնելու Յակուտիա, Թարմիր և Յայր Հյուսիսի մյուս մարդերը։

Մոտենում եր արկտիկ նավիդացիայի վերջը։ Վրայ յեր հասնում խստաշունչ բևեռային ձմեռը։ Նավերին արգեն ժամանակն եր վերադառնալ իրենց նավահանգիստները, բայց այդ մասին կարգադրությունն ուշացավ։ Արկտիկայի «սառուցե զուռը», այն



Պիոդիու սարքաբան «Լուրդ Արկտիկ կուրտեր»

Ե՞ Վիլկիցկու նեղուցը, վոր միացնում է Կարայան ծովը Լապտեվիների ծովի հետ, արդեն դարձել եր անանցանելի։ ցամաքի և Բոլշևիկ (Հյուսիսային Յերկիր) կղզու միջև յեղած ամբողջ տարածությունը լցվել եր ծանր սառուցով։

«Սեղովը», վորը փորձեց ճանապարհ բանալ Վիլկիցկու նեղուցի միջով, ստիպված եր հետ գառնալ դեպի արևելք։ Ծովում որսան միացան «Սաղկոն» և «Մալիդինը»։

Սառցահատ յերեք չողենավերն ել ուղեռվում եյին դեպի Արևելա-սիրիական ծովը։ Բայց այստեղ ել նրանք անանցանելի սառցային անջրավետների հանդիպեցին։ Նավերի բունկերներում ածուխն արդեն վերջանում եր, իսկ քարավանը որական դժվարությամբ անցնում եր միքանի մղոն։

Այնուամենայնիվ նավերը շարունակում եյին դանդաղորեն շարժվել դեպի Նոր-սիրիական կղզիները, հույս ունենալով թաղնվել վորեւ սպասարկանված ծովախորշում և դրանով իսկ խոռոչներ սառուցների հետ միասին դեպի հյուսիս ահեղ դրեյֆ կատարելուց։ Սակայն շուտով նավերն ընկան սառուցների դերության մեջ։ Հյուսիսային ծովային ճանապարհի Դիսավոր վարչությունից քարավանը հրաման ստացավ ձմեռելու Լապտեվիների ծովի դրեյֆող սառուցների մեջ։

1937 թ. հոկտեմբերի 23-ին 75-րդ զուգահեռականից մի փոքր հյուսիս, Բելկովսկու կղզու մոտ սկսվեց սառցահատ չողենավ «Սեղովի», «Սաղկոյի» և «Մալիդինի» դրեյֆը։ Դրեյֆող նավերը յեռանկյունաձև տեղավորվել եյին իրարից մոտ յերկու հարյուր մետր հեռավորության վրա։ Արդեն առաջին յերեք որպաս ընթացքում քարավանը 17 մղոն դեպի հյուսիս տարվեց։

Ավելի քան քառասուն տարի որպաս համարյա այս նույն ուայոնում մկանեց արկածիկ հետազոտիչ Ֆրիտյոֆ Նանսենի դրեյֆը «Ֆրամ» («Հառաջ») նավով։ Նանսենի եքապեղիցիան առաջին քայլն եր յերկրագնդի անծանոթ մարզի ուսումնասիրության ասպարեզում։ Այժմ «Ֆրամի» ուղին կրկնում եյին խորհրդագիրն ընեռախույզ ծովագնացները դրեյֆող խորհրդագիրն նավերով։ Բայց ում եյին խիստ թանգարժեք դիտական հետազոտությունների հիանալի հեռանկարներ...

Ծուրջը ձյունածածկ անապատ եր։ Մինչև հորիզոնը տարածվում եր միապաղաղ սպիտակ ծածկոց։ Յերեմն ընեռախին աղջամուղների ժամանակ նավերի վրա վառվում եյին լուսարձակներ։ Պայծառ կերպով վառվում եյին նավերի կայմերի վրա



դտնվող աղջանշանային կրակները։ Հեռվից նավերը թվում եյին հսկայական տներ, վորոնք կառուցվել են սառուցով ծածկված անապատում։

Խիստ սառնամանիքներ եյին տիրում։ Յերկնքում հուրհրատին եյին տալիս բևեռափայլերը՝ բևեռային յերկնքի այդ քմահաճ հրավառությունը։ Յերբ հարավային քամիները մառախուղ եյին բերում, հյուսիսային գիշերովա մթությունն ավելի ևս թանձր եր դառնում և նավերի վրա անհանդստությամբ եյին սպասում սառուցի վրա իջած ընկերներին։

Հոկտեմբերյան մեծ հեղափոխության XX տարեղարձի որը նավերի մոտ ամբիոն բարձրացավ, վորը կառուցվել եր սառուցի մի հսկայական կտորից։ Տորոսի վրա աչքի յեր ընկնում պայծառ նկարիված աստղը։ Ամբիոնը զարդարեցին դրոշակներով, լոգունդներով, ընկեր Ստալինի դիմանկարներով։

Նավերի վրա մնացին միայն հերթակալները։ Յերկու հարյուր մարդ շարժվեցին գեղի սառցապատ դաշտը։ Նրանց ճանապարհը լուսավորվում եր ջահերով։ Իսկ յերեկոյան, միտինդիդ հետո բոլոր յերեք նավերում կայացան գեղարվեստական ինքնադրծունեյության յերեկոներ։

Բևեռային ծովաղնացները պատրաստվում եյին ձմեռված համար։ Զարկավոր եր նավերը տաքացնել, յերկաթե տակառները ներսից պատում եյին աղյուսով, պատրաստում եյին բուխարիկներ։ տախտակամածների վրա շաղ տվին չլակի հաստ շերտ։ տվինդեկներում սարքվեցին հանրակացարաններ, կոյլաները ձգվում եյին նավակողերի յերկարությամբ։ տվինդեկների կենտրոնում դրված եյին բուխարիկներ։

Վառելիքը քիչ եր, պետք յեղալ գոլորշին բացազատել և դինամո-մեքենան կանգնեցնել, այժմ արդեն կայմերի վրա կրակներ չեյին փայլում։ Զինաթափվեցին նավի մեքենաները։

Նոյեմբերի կեսերին քարավանի ծովաղնացները վերջնականապես պատրաստվեցին ձմեռելու համար։ Այժմ նավերի ներսի շենքերում 12—14 աստիճանի տաքություն եր պահվում, լաբորատորիաներում՝ 5—6 աստիճան, իսկ «փողոցում» մինչեւ 15 աստիճան ցուրտ եր։

Քամու ուղղությունը վոխավելուց հետո փոխվում եր նաև դրեյֆը. սառուցների կողմից քաշվող նավերը մանր զիգզազներ եյին կատարում և անշեղ կերպով շարժվում եյին դեպի հյուսիս։ Առաջին ամսվա ընթացքում քարավանն անցալ 200 կիլոմետր (ուղիղ գծով)։



Հիդրոգրաֆ Վ. Խ. Բույնիցիկին կատարում եւ մազմիսային դիտողություններ
(1938 թ. ամառ)

Դրեյփն ընթանում եր հանդիսա:

Նավերում առավոտյան ժամը 7-ին անձնակազմը զարթեցնում ելին: Լվացվելով և տաք հաղնվելով, ծովագնացները դուրս ելին վաղում և իջնում սառուցի վրա. որն սկսվում եր Փիզկուլտուրային մարզանքով: Առավոտյան ժամը 8-ին բոլորը նախաճաշում ելին: Այնուհետև մինչև կեսօր դիտական և նախային աշխատանքներ ելին կատարվում:

Սաղկոյականները սառուցից մի փոքր տնակ ելին շինել: Այստեղ դրել ելին հիդրոլոգիական կարապիկ: Սառուցի մեջ բացված ճեղքից չափումներ ելին կատարում, ջրի նմուշներ ելին վերցնում, իջեցնում ելին պտուտաններ հոսանքների արագությունն ու ուղղությունը վորոշելու համար: Նավից մի փոքր հեռու սառցադաշտի վրա վրան եր սարքված մաղնիսային դիտություններ կատարելու համար:

Կանոնավոր կերպով անց ելին կացվում մետեորոլոգիական և աստղաբաշխական հետազոտություններ: Այս հետազոտությունները բացահայտում ելին այն որենքները, վորոնք կառավարում են ցիկլոնների ու անտիցիկլոնների շարժումը, տակա ելին դրեյփող նավի ճիշտ «հասցեն»: Գիտական և նավային աշխատանքներով աննկատելիորեն անցնում եր մինչև կեսօր յեղած ժամանակը: Ճաշելուց և կարճատե հանդսուց հետո աշխատանքը վերսկսվում եր:

